ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-11/21-13/35

ք.Երևան 11. դեկտեմբեր. 2013թ.

«Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը, ի դեմս գործերի կառավարիչ Հ. Սիմոնյանի, որը գործում է ՀՀ կառավարության աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և «Կիա Մոթորս Արմենիա» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ս. Փանոսյանի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից (այսուհետև՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում (հավելված N 2) Գնորդին հանձնել Պայմանագրի N 1 հավելվածով՝ գնման առարկայի բնութագրով նախատեսված ավտոմեքենաներ (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

1.2. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին՝ ՀՀ կառավարության աշխատակազմի գործերի կառավարչության տրանսպորտային բաժին՝ ք. Երևան, Իսակովի 11 հասցեով:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1. Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարվելու դեպքում հրաժարվել Ապրանքից:

3.1.2. Չընդունել Ապրանքը, եթե այն չի համապատասխանում Պայմանագրի հավելված N1-ով սահմանված գնման առարկայի բնութագրի պահանջներին՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2. կետով նախատեսված տույժը և 7.3. կետով նախատեսված տուգանքը.

3.1.3. Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու Պայմանագրի 7.3. կետով նախատեսված տուգանքը.

գ) պահանջել տեսակի պայմանին չհամապատասխանող Ապրանքների անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքներով.

3.1.4. Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2. կետով նախատեսված տույժը.

3.1.5. Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ

անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.6. Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Վաճառողը խախտել է Պայամագրի 3.1.2. կամ 3.1.4. կետերով սահմանված ժամկետները:

3.1.7. Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1. Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2. Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3. Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Պայմանագրի 4.2. կետում նշված ժամկետում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում, Վաճառողի պահանջով՝ Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4. Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5. Պայմանագրի 3.3.3. կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1. Գնորդից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2. Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.3. Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Գնորդն երկու և ավելի անգամ խախտել է Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1. Գնորդին հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2. Ապահովել Պայմանագրի 2-րդ կետով սահմանված Ապրանքի մատակարարման պայմանները:

3.4.3. Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.4. Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ << օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.5. Հետ տանել Գնորդի կողմից Պայմանագրի 3.2.2. կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.6. Իրականացնել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված Ապրանքի երաշխիքային և հետերաշխիքային սպասարկումը:

3.4.7. Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 7.2. և 7.3. կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.8. Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.9. Գնորդին ներկայացնել Ապրանքի ձեռքբերումը կամ ներմուծումը հավաստող փաստաթղթի բնօրինակը և պատճենը:

3.4.10. Պայմանագրի 3.1.6. կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11. Գնորդի պահանջով պարտավոր է իրականացնել 12 ամիս հետերաշխիքային սպասարկում՝ տվյալ տեխսպասարկման կայանում գործող սակագներից 5% զեղչով:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1. Պայմանագրով Վաճառողի կողմից մատակարարման ենթակա Ապրանքների ընդհանուր գինը կազմում է 26400000 (քսանվեց միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները: Յուրաքանչյուր միավորի գինը սահմանվում է Պայմանագրի հավելված N1-ով: Գինը ներառում է նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

4.1.1 Պայմանագրի ընդհանուր գնից 17600000 (տասնյոթ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամը, Գնորդը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար, Պայմանագրի ուժի մեջ մտնելուց 5 աշխատանքային օրվա ընթացքում: Կանխավճարի մարումն իրականացվում է սույն պայմանագրով նախատեսված արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության և կանխավճարի ապահովման հիման վրա՝ Պայմանագրի հավելված N 3-ով (վճարման ժամանակացույց) նախատեսված ամսում, սակայն ոչ ուշ քան 2013թ. դեկտեմբերի 25-ը:

5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից Ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 5 տարին կամ ավտոմեքենայի 150000 կմ վազքը:

5.3 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

Երաշխիքային սպասարկումը տարածվում է շարժիչի, փոխանցման տուփի, հարվածամեղմիչների, բոլոր առանցքակալների, գնդիկավոր հենասյուների, կայունարարի կանգնակների, բոլոր էլեկտրական հանգույցների (բացի լամպերից ու ապահովիչներից), ուժեղարարի ուղղորդիչների, շարժական նռնակների, կոնդիցիոների կոմպրեսորի, կամրջակների վրա:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից երկու աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության (հավելված N 4) երկու օրինակ:

6.2 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից երկօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.3 Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ Պայմանագրի գնի 0.1%-ի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացուցային օրերով՝ Պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 1,0%-ի չափով:

7.4 Պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1%-ի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրային պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1. Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Պայմանագիր ստորագրած Կողմի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Գնորդի հետ Պայմանագիր կնքած անձը:

9.2. Պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան Կողմի գրավոր համաձայնության:

9.3. Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ

Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4. Վաճառողը պարտավոր է Պայմանագրի (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

9.5. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

9.6. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

9.7. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.8. Պայմանագրի N1, N2, N3 և N4 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը: Պայմանագիրը (ներառյալ հավելվածները) կազմված է **9** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ կառավարության աշխատակազմ ՊԿՀ	«Կիա Մոթորս Արմենիա» ՓԲԸ
ք. Երևան, Կառավարական թ.1 շենք	Իրավ. հասցե՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 19
ՀՀ ՖՆ գործառնական վարչ.	Գործ. հասցե՝ ք. Երևան, Սեբաստիա 37
Հ/Հ 900011022432	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02505554	Հ/Հ 1930029111810100
էլ. հասցե՝ gnumner@gov.am	ՀՎՀՀ 01563753
	էլ. հասցեն՝ info@kia.am
/ Հ. Գրիգորյան /	/ Ա. Փանոսյան /
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1.
«11» դեկտեմբերի 2013թ. կնքված
N ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-11/21-13/35
գնման պայմանագրի

Գնման առարկայի բնութագիր
Մարդատար ավտոմեքենա

ՀՀ դրամ

Հ/հ	Անվանումը	Քանակը /հատ/	Տեխնիկական բնութագիրը	Միավորի գինը	Ընդհանուր գինը
1	Ավտոմեքենա՝ ԿԻԱ ՍԵՐԱՏՈ /KIA Cerato/	3	2013 թվականի արտադրության (չօգտագործված), սեդան (դռների քանակը՝ 4 հատ), երկարությունը՝ 4560մմ, լայնությունը՝ 1780մմ, գույնը՝ սև, շարժիչը՝ բենզինային, 1.6 լ աշխատանքային ծավալով, 130 ձիաուժ հզորությամբ, փոխանցման տուփը՝ ավտոմատ, անվահեծերը՝ 16", ալյումինե: Համալրումը՝ անվտանգության բարձիկներ, ABS համակարգ, կայանման հետևի համակարգ, օդորակիչ, հակամառախուղային լուսարձակներ, ապակիներն և կողային հայելիներն էլեկտրական կառավարմամբ, MP3 աուդիո համակարգ, լիաչափ պահեստային անվադող:	8800000	26400000
			Ընդամենը (ներառյալ ԱԱՀ-ն)՝		26400000

Գ Ն Ո Ր Դ
ՀՀ կառավարության աշխատակազմ ՊԿՀ
ք. Երևան, Կառավարական թ.1 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
Հ/Հ 900011022432
ՀՎՀՀ 02505554
էլ. հասցե՝ gnumner@gov.am

/Հ. Միմոնյան/
Կ.Տ

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ
«Կիա Մոթորս Արմենիա» ՓԲԸ
Իրավ. հասցե՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 19
Գործ. հասցե՝ ք. Երևան, Սեբաստիա 37
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 193002911810100
ՀՎՀՀ 01563753
էլ. հասցեն՝ info@kia.am

/Ա. Փանոսյան/
Կ.Տ

Հավելված N 2.
«11» դեկտեմբերի 2013թ. կնքված
N ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-11/21-13/35
գնման պայմանագրի

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Ապրանքի					
	Անվանումը	Չ/մ	Միավորի գինը /Հազար ՀՀ դրամ/	քանակը	գինը /Հազար ՀՀ դրամ/	Մատակարարման վերջնաժամկետը
1	2	3	4	5	6	7
1	Ավտոմեքենա	հատ	8800.0	1	**8800.0**	20.12.2013թ.
2	Ավտոմեքենա	հատ	8800.0	2	**17600.0**	21.03.2014թ.
Ընդամենը				3	**26400.0**	

ԳՆՈՐԴ
ՀՀ կառավարության աշխատակազմ ՊԿՀ
ք. Երևան, Կառավարական թ.1 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
Հ/Հ 900011022432
ՀՎՀՀ 02505554
էլ. հասցե՝ gnumner@gov.am

_______________ / Ստորագրություն /
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Կիա Մոթորս Արմենիա» ՓԲԸ
Իրավ. հասցե՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 19
Գործ. հասցե՝ ք. Երևան, Սեբաստիա 37
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 193002911810100
ՀՎՀՀ 01563753
էլ. հասցեն՝ info@kia.am

_______________ / Ստորագրություն /
Կ.Տ

Հավելված N 3.
«11» դեկտեմբերի 2013թ. կնքված
N ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-11/21-13/35
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
Մարդատար ավտոմեքենա

Հազար ՀՀ դրամ

N	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել	
		2013թ.-ի դեկտեմբեր ամսին	Ընդամենը Տարի
1.	Ավտոմեքենաներ /3հատ/	26400.0	**26400.0**

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ
ՀՀ կառավարության աշխատակազմ ՊԿՀ
ք. Երևան, Կառավարական թ.1 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
Հ/Հ 900011022432
ՀՎՀՀ 02505554
էլ. հասցե՝ gnumner@gov.am

/Ա. Սիմոնյան/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Կիա Մոթորս Արմենիա» ՓԲԸ
Իրավ. հասցե՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 19
Գործ. հասցե՝ ք. Երևան, Սեբաստիա 37
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930029111810100
ՀՎՀՀ 01563753
էլ. հասցե՝ info@kia.am

/Ա. Թանասյան/
Կ.Տ

Հավելված N 4.
«11» դեկտեմբերի 2013թ. կնքված
N ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-11/21-13/35
գնման պայմանագրի

ԿԱՏԱՐՈՂ
«Կիա Մոթորս Արմենիա» ՓԲԸ
Իրավ. հասցե՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 19
Գործ. հասցե՝ ք. Երևան, Սեբաստիա 37
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930029111810100
ՀՎՀՀ 01563753

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ կառավարության աշխատակազմ
ք. Երևան, Կառավարական թ.1 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022432
ՀՎՀՀ 02505554

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<____>> <<_____>> 2013թ.

Պայմանագրի անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<11>> <<դեկտեմբեր>> 2013թ.
Պայմանագրի համարը՝ ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-11/21-13/35
Պատվիրատուն՝ ի դեմս ՀՀ կառավարության աշխատակազմի գործերի կառավարիչ Հ. Սիմոնյանի և Կատարողը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը __ _____ 201 թ-ից __ _____ 201 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
Ազգանուն, Անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
Ազգանուն, Անուն
Կ.Տ.